Խորհուրդը և Հ․ Ազգ․ Խորհուրդը կորցնում էին իրենց ամենաձեռնհաս ու գործօն անդամներից մէկին։

Մարտեան դէպքերի առթիւ Հ․ Ազգ․ Խորհուրդը հրատարակեց մի ընդարձակ հաղորդագրութիւն, որի մէջ տալիս էր դէպքերի մանրամասն նկարագրութիւնը։

Այս հաղորդագրութիւնից երևում էր, որ Ազգ․ Խորհուրդը ազատեց բազմաթիւ մահմետականներ, որոնց պահեց մի քանի օր, կերակրեց և ապահով վերադարձրեց իրենց տները։ Այդ մահմետականները գտնուած էին հետևեալ վայրերում․ Մայիլեանների թատրոնում՝ 3500 *հոգի, որոնցից* 70 *պարսկահպատակներ․ Ռեկորդ թատրոնում՝* 2690, *Ռամզէյ թատրոնում՝* 579, *Եֆիմովի կրկէս-թատրոնում՝* 800, *Վոկզալնայա և Տելեֆոննայա փողոցի անկիւնի տանը՝* 58, *Բուդաղեանի դպրոցի շէնքում՝* 218, *Միրոնովի բաղնիքում՝* 306, *Մոսկովեան բաղնիքում՝* 263, *ութերորդ միլիցիատանը՝* 117, *եօթներորդ միլիցիատանը՝* 72, *Մալայա-Մորսկայա փողոցի* № 15 *տանը՝* 95, *Երրորդ Գիմնազիայում՝* 201, *Հայոց Կուլտուրական Միութեան տանը՝* 18, *քաղաքային սայլանոցում՝* 2530, *իններորդ միլիցիատանը՝* 200, *Հայկաւանում՝* 79 — *ընդամենը* 11,726 *հոգի։ Մօտ* 1500 *մարդ էլ ապաստանել էր հայերի մասնաւոր տներում։ Առհասարակ, Բագուի հայութիւնը ցոյց տուեց արտակարգ հոգատարութիւն։ Նա, կարելի է ասել, փրկեց Բագուի Թուրքերի ամբողջ մտաւորականութիւնը։ Եւ․․․ վարձատրութիւնը ստացաւ վեց ամիս յետոյ, սեպտեմբերեան օրերին։*

Մուսաւաթի ողնաշարը ջարդելուց յետոյ, Բաք․ Խորհուրդը ձեռք առաւ և գաւառի Թիւրք-մուսաւաթական դաւերի սանձահարման գործը։ Մարտ 27*-ին Շամախի ուղարկեց մի զօրամաս Թադ․ Ամիրեանի գլխաւորութեամբ, որի երևալը հիմնովին փոխեց դրութիւնը Շամախիում։ Ամիրեանը զսպեց քաղաքի Թուրքերին․ կռւի ժամանակ հիմքից այրեց Թրքական Թաղը։ Հայ գաղթականները վերադարձան իրենց տեղերը, իսկ Թուրքերը հեռացան։ Խաղաղուեց նաև Գէոքչայի գաւառը, որտեղի Թրքութիւնը նոյնպէս հեռացաւ։*

Մարտի դէպքերի վրա, Բագուն գրաւելու փորձեր արին և լեռնականները, որոնք փետրուարից սկսած՝ կտրել էին Բագու—Պետրովսկ երկաթուղին և առատ զէնք ու ռազմամթերք խլելով վերադարձող ռուս զօրամասերից՝ անվերջ յարձակումներ էին գործում իրենց շրջապատի վրա։ Մարտ 21*-ին նրանց զինուած խմբերը հասան մինչև Բալաջար, իսկ նրանց պետ իմամ Գոծինսկին Պետրովսկից տուած հեռագրներով սպառնում էր պատժել հայերին։ Ապրիլի սկզբներին, սակայն, հայկական զօրամասերը ջարդեցին ու քշեցին նրանց խմբերը։ Այս յաջողութիւնը խիստ բարձրացրեց հայ զինուորների մարտական ոգին։*

Ազգային Խորհուրդը որոշեց համախմբել ու կազմակերպել բոլոր հայ զօրամասերը, ենթարկել նրանց մէկ հրամանատարութեան և այդ որոշումը իրագործելու համար յարաբերութեան մէջ մտաւ Զին․-Յեղափ․ Կոմիտէի հետ, սակայն, մարտի յաջողութիւններից արբեցած՝ բոլշևիկներն